

իւր կամքը: Բայց թող նա նոյն կամքը փորձէ դիցուք կատուի վերայ — և կատուն եղունգով կցեալ նորան: Վննեցէք այժմ մանուկի գլուխ եկած բոլոր մտքերը այս երկու դէպքերի մէջ, — և դուք մեծ զանազանութիւն կտեսնէք, անտեղի, անձիշտ եղբակացութիւններն առաջին դէպքի մէջ և ներգործականութեանն համապատասխան ճիշդ մակաբերութիւններ երկրորդ դէպքի մէջ: 7

Երեւակայութիւնը չքաւորութիւնը տպաւորութիւնների չքաւորութեանից է առաջանում: Չորս պատի մէջ կրթված, բացի ծնողներ և դայեակը մարդ չտեսնող մանուկը ի հարկէ չէ կարող երեւակայութեան հարստութեամբ պարծենալ երեւակայութիւնը կրթվում է բնութեամբ, կրթվում է մարդիկների հետ ունեցած յարաբերութիւններով:

(Անգլերէն է յեբրայէն):

ՀԱՅՈՑ ԼԵՋՈՒԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՏԵԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ (*):

Մեծ Հայք անուանեալ մեծատարած երկիրը, որոյ տէրութիւնը բաժանում են իրենց մէջ տաճիկք, Պարսիկք և Ռուսք,

(*) Այս յօդուածը Սէն — մարթէն Հայագէտ Գաղղիացոյ Յէյսապարան Հայաստանի երկասիրութեան յառաջարանն է. իսկ մէք նորա բոլոր շարադրութեանց թարգմանութիւնը պատրաստելով, անտեղի չհամարեցինք պարզել մեր ընթերցող Հայ Հասարակութեան, առ այժմ, այս յառաջարանն որ կրովանդակէ իւր մէջ, նորա Հայկական գրականութեան վերայ ունեցած հայեացքն և դադարփառն որք նորա բաղմաժամանակեայ աշխատութեանց արդիւնք կարեն համարուիլ:

Յաննէ Թարգմ.

երեք հարիւր մղոնաչափ տարածութիւն ունի և հասանումէ արեւմտեքից արեւելք, Եւփրատ գետոյ եզերքներից մինչև Կուր գետոյ բերանը որ թափուում է Ասպից ծովը և հիւսիսից հարաւ Վրաստանից և Կովկասեան լեռներից մինչև Տիարպէքիւր (Տիգրանակերտ կամ Յամիլթ) քաղաքի հարաւային սահմանադրուիքը: Այս երկրի երկու հարիւր յիսուն մղոնաչափ տարածութեան մէջ ուրիշ լեզու չէ լուսւում բայց եթէ Հայերէն միայն, սորանից բացառութիւն է կազմում թուրքաց լեզուն որ մահմետականաց մէջ է միայն գործածական, դեռ այս վերջիններից շատերն ևս մեծ քաղաքներից հեռանալով և զիւզելով հաստատուել իրենց բնակութիւնը՝ ընդունեցին Հայերէն աշխարհիկ բարբառը, որ մասամբ ազաւաղեալ հին գրաբառի և թուրքաց լեզուի խառնուրդն է: Սոյն այս գործածութեան երեւակալը տարածուած է փոքր Ասիոյ արեւելեան մասում, այն է փոքր Հայք գաւառում, Կիլիկիայում և Շիրվանում:

Հայերէն լեզուի կիրարկութիւնն միայն այս երկիրներում չէ սահմանաւորուում: Հայք Ասիոյ և արեւելեան Եւրոպիոյ զանազան մասերն ցրուելով՝ իրենց լեզուն ևս իրենց հետ են տարեր: Նոքա արդարեւ բոլոր Անատոլիոյ, Ասորեստանի հիւսիսային բոլոր մասերի, Միջագետաց, բոլոր Ատրպատականի՝ որ ի հնումն Հայաստանի Վասպուրական կոչեցեալ նահանգի մի մասն էր կազմում, Պարսկաստանի Իրակ աշխարհի, Գիլան և Մազանդերան նահանգների, Ասպահանու շրջակայ երկիրների, Վրաստանի՝ որ Հայաստանի աւերակային բեկորներով հարստացաւ,

անգամ մինչև Չերքեզստանի, Մժտար-
խանի, Տօն գէտոյ վերայ, Խրիմու, Լե-
հաստանի և վերջապէս Եւրոպական
Տաճկաստանի զանազան երկիրների բը-
նակչաց նշանաւոր մասն են կաղմուծ:
Եւս երկիրներում նոքա ո՛չ միայն իբրեւ
առևտրական անձինք կամ վաճառա-
կանք են բնակուում, այլ և նոցա մէջ
մի մեծ մաս ևս արհեստներով և երկրա-
գործութեամբ են պարապում: Իբրեւ վա-
ճառական միայն՝ նոքա ցրուած են Խա-
լայոս, Եւստրիայում, Մոլտաւիայում
և Եւրոպիոյ ուրիշ շատ մասերում: Առ-
ցանից մի մեծ մաս ևս գտանուում է Եւ-
րպատոում, Եստրեստանում, Բաղդա-
տում, Պարսկաստանում և մինչև ան-
գամ Հնդկաստանում:

Եւքի առաջ ունենալով այն երկիրնե-
րի շատութիւնն և ընդարձակ տարածու-
թիւնն՝ ուր զաղթել են Հայերը իրենց
հետ նաև լեզունին տանելով, չի կարելի
երկբայական աչօք նայել այն օգտաւե-
տութեան վերայ զոր Հայկական լեզուն
կարող է մատակարարել Եւրոպացւոց
այս երկիրների հետ ունեցած առևտրա-
կան յարաբերութիւնքը զիւրացնելու ա-
ղաղաւ, նա մանաւանդ որ եթէ կանգ
առնունք փոքր ինչ յիշել զե Պարսկաս-
տանի և Տաճկաստանի առևտուրն ու
դրամափոխութիւնը որպէս և մեր այդ
տէրութեանց հետ ունեցած յարաբե-
րութիւնքը համարեա թէ նոցա միջնոր-
դութեամբ են կատարուում:

Եւսու ամենայնիւ պիտոյ է գիտել որ
այդ բանի համար Հայերէն լեզուի ծանօ-
թութեանց հետ շատ օգտակար է և Ե-
ւրպացւոց, Պարսից ու Թուրքաց լեզ-

ւաց բաւական ընդարձակ տեղեկութիւնք
ունենալն. վասն զի այն ժամանակից սկը-
սեալ, երբ Հայաստանը մահմետականաց
լծոյ տակն ընկաւ, Հայք իրենց թղթա-
կցութեանց համար սովորաբար գործական
բարբառի և արգի գրքերի մէջ վերոյիշեալ
զանազան ազգաց լեզուներից շատ բառեր
ընդունեցին: Աւ որովհետեւ այդ նորա-
մոյծ բառերը, ըստ մեծի մասին չեն գտնը-
ւում ո՛չ մեզ մօտ եղած և ո՛չ առ հա-
սարակ հրատարակուած Հայերէն բառա-
գրոց մէջ. վասն որոյ զանոնք Թարգմանելն
միանգամայն դժուարացնումէ զաշխատօղն
բնագրի մէջ այդպիսի բառերի պատա-
հելու ժամանակ, երբ աշխատասէր հեղե-
նակը կամ Թարգմանիչը անծանօթ է վե-
րոյիշեալ լեզուաց դպրութեան:

Խօսելով այժմ այն օգտից վերայ զորս
պատմութիւնն և լեզուագիտութիւնը
կարեն ստանալ Հայկական լեզուի և գրա-
կանութեան ուսումնասիրութիւնից, ար-
դարեւ կխոստովանիմք և մեք որ պատմու-
թեան և լեզուագիտութեան նկատմամբ
անկարելի է ժխտել Հայկական գրակա-
նութեան կարևորութիւնը, բայց և չկա-
մելով խորասուզել այն չափազանցու-
թեանց անդունդք, որովք ասպարէզ կը-
հանդիսանան Եւրոպայի Հայագէտք, նո-
ցա քննադատութեանց և գիտութեան
մէջ հաւասարակշռութիւն մի կմաղթե-
ինք, չեմք կարող միևնոյն ժամանակ Հա-
յոց գրականութիւնը նախադասել արեւե-
լեան բոլոր միւս ազգաց գրականութիւ-
նից: Ամենայն տեսակ մատենագրաց անընդ-
հատ շարքը, զոր Հայաստանը յառաջ է
բերեր մեր Թուականի չորրորդ դարուց
մինչև մեր օրերը և այն փոյթն ու եռան-

զը զոր Հայքացիք են տպարանաց հաստատութեան մէջ իրենց բազմութեամբ հաստատուած երկիրներում, որպէս զի երևան հանն իրենց ազգի մատենագիրք, ապացոյցք են իրենց գրականութեան մըշակման եռանդուն ջանից և ճգնաց: Եւ յիրաւի նոքա ունեցած են և ունին տպարաններ Եմստերտամում, Լէյպցիխում, Վերնեովում, Լիւթորնում, Լհաստանի Լէօպոլ քաղաքում Կոստանդնուպոլսում, Օմիւռնայում, Ռուսաստանի զանազան քաղաքներում, Լքմիաճնում՝ որ իրենց Եկեղեցւոյ գլխոյ կամ Կաթողիկոսի աթոռատեղին է, Մատրասում և ուրիշ շատ տեղերում: Նոքա ունեին և առաջ Զուլայում, Եսպահանում մօտ և Մարսիլայում որ խափանուեցաւ Ղաղղիոյ կղերի և Պրոպականդայի միաբանութեան պահանջողութեամբը, վասն զի, ինչպէս ասում էին, հերետիկոսաց միտքը և կարծիքը բովանդակող գրքեր էր հրատարակում:

Թէպէտ Հայկական գրականութիւնը չունի այն հետաքրքրութիւն և հարստութիւն զորս ունին Երաբացւոց, Պարսկաց, Հնդկաց և Չինացը, սակայն արժանի չէ նա այն մոռացման, որոյ մէջ թաղուած է ցայսօր ժամանակի: Եյդ գրականութեան շնորհիւ յառաջ եկած բազմութիւն մատենագիրք զդա յամենայնի նշանաւոր և արժանաւոր են հանդիսացուցանում: Եյդ մատենագրաց մէջ գլխաւորապէս նշանաւոր են պատմիչներն, որոնք թէև իրենց Հայրենեաց պատմութիւնն են աւանդում մեզ միայն, որ յիրաւի, արժանաւոր անցից կողմանէ, այնքան արգասաւոր չէ եղեր ինչպէս արևելեան միւս երկիրներինը, սակայն այնու ամենայնիւ

զարձեալ կարող են ծառայութիւն մի ևս մատուցանել Եսիոյ ժամանակագրութեանց պակասը լցուցանելով, այլ և մատակարարելով մեզ մեծ լոյս և շատ կարեւոր տեղեկութիւնք Կոստանդնուպոլսոյ Յունաց, Պարսկաստանի Սասանեան ցեղի թագաւորաց, մահմետական Երաբացւոց, Սելջուկեան թուրքաց, Խաչակրաց, Մոնղոլաց և ընդհանրապէս բոլոր արեւելից պատմութեան մասին, չորրորդ դարու սկզբներից մինչև արդի ժամանակները: Իսկ որ ինչ կախի մեր թուականի սկսելու մօտակայ ժամանակների և մանաւանդ առաջին դարերի պատմութիւնից, պիտոյ է դիտել որ Հայ մատենագրաց տուած տեղեկութիւնքը շատ սակաւ են և առ հասարակ ոչ այնքան ճշմարիտ որքան Յունաց և Լատինաց Պատմիչներինը ի բաց առեալ քանի մի բաւական հետաքրքրական եղելութիւնք նոյնքան իսկ թանկագին աւանդութիւնք: Հարկ չէ թէ և բոլորովին հերքել նոցա տուած վկայութիւնք, բայց և պիտոյ է մեծ երկբայութեամբ գործածել զայնս: Մովսէս Խորենացւոյ իւր Հայաստանի պատմութեան *) մէջ բերած Եսորեստանի թագաւորաց ցանկը Յունական գրականութիւնից է քաղուած ամբողջապէս, և եթէ մեք չունենայինք իսկ ինքեան հեղինակի վկայութիւն, սակայն այնու ամենայնիւ Յունական վերջաւորութիւնք, որոնցմով վերջանումեն այս իշխանաց մեծ մասի անուանք, մեզ քաջ կերպիւ

(*) Գիրք ա. զԼ 18, էջ 51, 52, 53. Տպագր. Ռւստ. Հայ և Լատ. Լոնդրա. 1736. 1. հատոր քառածալ.

կպարդէին դորա ինչ աղբիւրից հանած լինելը. բայց որովհետեւ չեն գտնուում մեզ մօտ այլ ևս նորա յիշատակած մատենագրութիւնք, վասն որոյ շնորհակալ պիտի լինիմք նորանից որ պահպանելու հասուցեր է մեզ նոցա հեղինակութիւններէից զոնէ քանի մի հատուածներ:

Նոյնը կարելի է ասել և Մեղացւոց թագաւորաց. որպէս և Կիւրոսի պատմութեան վերաբերութեամբ: Հայ պատմիչք Պարսկաստանի Արշակունեաց մասին բաւականանում են հարեանցի տեղեկութեամբ միայն անցնել, այն ինչ նոքա նոցա առաւել պարտաւոր էին ծանաչել քան արեւելեան միւս ցեղերին, վասն զի Հայաստանը գրեթէ միշտ նոցա հետ քաղաքական յարաբերութեանց մէջ է եղեր և նոցա ցեղից սերուած թագաւորներով է կառավարուէր. նա մանաւանդ երբ այս ցեղի իշխանները Պարսկաստանի Սասանեան ցեղից աթոռադուրկ լինելով խրմբովէն դիմել են Հայաստան, ուր իրենց ազգականներէից ընդունուէր և ստացեր են նոցանից այն տիրապետութիւնք, զորս պաշտպանել են իրենց սերունդք շատ դարեր ևս յետոյ: Նոյն իսկ Հայաստանի Արշակունեաց պատմութիւնն արդարեւ բաւականին մութն և շատ կետեր է յառաջադրում, որոնք խիստ քննութեան ենթարկուելու անընդունակ են և զորմեծ ուշադրութեամբ քննել կհարկաւորէր: Բաց յայդմանէ այդ պատմութիւնը ժամանակագրական գրեթէ անմեկնելի դժուարութիւններով լի և շատ տեղ ևս Յունաց և Ասորիաց ժամանակակից մատենագրաց աւանդած իրողութեանց միանգամայն հակառակ է: (Երևան, 1912)

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

ՄԱՍՆԱԴՐ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Ի 17 ամսոյս ի վանս Հառիճոյ Վ. հ. Հայրապետ մեր Վարդապետութեան Մասնաւոր Իշխանութիւն տուաւ ձեռնասուն աշակերտի Իւրում Վահրամ Արեղայի Մանկունւոյ:

Վ. հ. ՀԱՅՐԱՊԵՏ.

Վ. հ. Հայրապետ մեր մտադիր է յառաջակայ Սեպտ. ամսոյ ց15-ն վերադառնալ ի Հառիճոյ այսր ի Մայր Աթոռս ի Ս. Լ. ջմիածին:

Ի ԹԷԼՐԱՆԷ.

Ի Թէհրանէ ստացեալ մի գրութենէ քաղելով հետեւեալ տեղեկութիւնքը և արժան կհամարիմք հաղորդել մերանէից:

Հնդկ. և Պարսկ. Հայոց Առաջնորդ Վեր. Գրիգորիս Եպիսկոպոս Յովհաննէսեան ի 1-ն անցեալ Յունիս ամսոյ ի Թէհրանէ 3 ժամաւ հեռու ի Նիսիսիս կոչեալ արքայական ամարանոցն Պարսից Օգոստ. Հահին ներկայանալոյ պատիւն ունեցած է կարի վայելուչ ընդունելութեամբ:

Օգոստ. Հահին իւր ձեռամբ ընդունելով Վ. հ. Հայրապետի մերոյ նամակը*) ի ձեռաց Գ. Գրիգորիս Եպիս-

(*) Այս գրութեան թարգմանութիւնը հրատարակուել է Թէհրան քաղաքի Իւր. (Պարսկաստան) կոչեցեալ պաշտօնական լրագրի մէջ: